

պէս լինելուց յետոյ, մեզ մնում է միայն ցաւել որ վախկոտ, ազէտ քահանան ուզում է իր անձնական զգուելի վրէժխնդրութիւնները գրական ապագրիզում լուծել, այն էլ պոռնոգրաֆիայով. . *

Ն.-Էան.

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

Թուրքիայի Սահմանադրութիւնը

և

Օրմանեան Ս. Պասրիարֆի հրաժարականը

Միանգամայն անսպասելի էր յուլիսի 11-ին հրատարակուած Սահմանադրութիւնը Օսմանեան պետութեան մէջ: Բռնութեան, հալածանքի, անիրաւութեան դատական աշխարհը, մանաւանդ Հայ ժողովրդի վերաբերութեամբ, երիտասարդ թուրքերի կուսակցութեան խելօք գործունէութեամբ և մակեդոնական զօրքի ապրտամբութեամբ սահմանադրական է դառնում: Սուլթան Համիդի 32 ամեայ կառավարութիւնը ոչ միայն հիմնովին հակառակ է եղել սահմանադրական ազատութեան, այլ իսկական գազանական բռնութեան մարմնացումն էր: Թէպէտ մի ամիս է անցել արդէն սահմանադրութեան հրատարակութեան օրից և ոչինչ փորձ չի հաղորդուած լրագրութեան մէջ կառավարութեան կամ Սուլթանի կողմից Սահմանադրութիւնը խանդարելու նկատմամբ,

* Եթէ ճշմարիտ է որ վերոյիշեալ գրքիկի հեղինակը քահանայ է, ի բոլոր սրտէ ցաւել կարելի է միայն: Մի՞թէ քահանաներն էլ մրցակից պիտի հանդիսանան կեղտոտ գրականութեան մէջ Մելիք-Աղամեանի նման գրչակներին (տես «Արարատ» Մայիս-Յունիս 1908, եր. 390) իրենց վսեմ կոչման ծառայելու փոխարէն: Խմբ.

բայց զգուշութիւնն ու խոհեմութիւնը չպէտք է ձեռքից բաց թողնել և չափազանցութիւնների մէջ ընկնել։ Մեր ժողովուրդը յատկապէս պէտք է ազատ պահէ իրեն թեթիւամտութեան հոսանքներից, միշտ ակնդէտ իւր ազգային եկեղեցական շահերին՝ լրջմտութեան և քաղաքակրթական շինարարութեան ընթացքի մէջ։

Տարաքաղաքար Ս. Օրմանեանի հրաժարականի հետ կապուած երևոյթները ցոյց են տալիս, որ մենք ոչ միայն շատ հեռու ենք քաղաքականապէս հասուն և պատուազգած ազգ լինելուց, այլ և բարոյական այնպիսի արատներ ունինք, որ հետեանք են երկարատե ստրկութեան և ստորացման։ Կարգացէք Պօլսոյ հայ թերթերը և տեսէք ձեր մէջ նողկանքի և արհամարհանքի ինչպիսի զգացում է զարթնում միանգամայն աւելորդ և զգուելի շողորթութութեան, ստրկութեան ցոյցերի ու խօսքերի համար, որ ողջուած են զօրաւորներին՝ Սուլթանի և Երիտասարդ թուրքերի հասցէին՝ «Դրօշակը» (№ 7) իրաւունք ունի, «Դա «Փօլիթիկ» չէ, այլ պարզապէս ստորաքարշութիւն», «ստրկամտութեան նոր ու այլանդակ ցոյցեր»։ Պօլսոյ Հայերն այժմ իրենց Օսմանցի են անուանում՝ երիտասարդ թուրքերի ցանկութեան համեմատ։ Բայց երկարատե ստրկութեան ազդեցութիւնը, որ ստեղծել է ջենտլմենութեան զգացումից զուրկ մի սերունդ, շատ աւելի բնորոշ կերպով արտայայտուում է Ս. Օրմանեանի դէմ եղած միանգամայն պարօտելի, խուժանական ցոյցերով և լրագրական գարշահոտ յօդուածներով։ Հայ խուժանն ու իւր պետերը իրենց բացասական եռանդով այնպիսի ծայրայեղութեան և անամօթ գործողութիւնների հասան, որ բոլոր օտարազգի հասարակութիւնները անխորի պախաւակեցին նրանց արարմունքը և երեկուայ Հայոց Պատրիարքը Երիտասարդ թուրքերի հովանաւորութեամբ միայն պիտի ազատուէր աւելի անսպասելի դէպքերից։

Սրբազան Օրմանեան, որ պատրիարքական աթոռն էր բարձրացել 1896 թուի կոտորածներից յետոյ, որ իւր

12 ամեայ պատրիարքութիւնը վարել էր ամենածանր պայմանների մէջ և իւր զգուշութեամբ, խելքով և քաղաքագիտութեամբ կառավարել ազգն ու եկեղեցին հնարաւորութեան չափ, հիացմունք ազդելով Գեղեցերի նման աշխարհ տեսած գիտնականներին, այս ազատութեան օրերին պէտք է միայն գոհունակութեան արժանանար, Օրմանեանցը միակ մարդն էր, որ այդ երկարատե ճգնաժամի, փոթորկի ու, ալէկոծութեան շրջանում հայ ժողովրդի կառավարութեան նաւը վարել կարող էր։ Նորա պատրիարքութիւնն արդարեւ չի եղել այնպէս արդիւնաւոր, ինչպէս կլինէր ուրիշ պայմաններում այդպիսի ժիր, ընդունակ, անսահման եռանդով լցուած և կրթուած պատրիարքի օրով, բայց տհասութեան և թեթեամտութեան յատկանիշ է, առանց ժամանակի տիրող հանգամանքները կշռելու մի գլուխ քննադատել և պահանջներ անել։ Ի՞նչ են հասկանում տաք գլուխ և տգէտ խուժանապետները իրերի և պայմանների կշռադատութիւն, պատասխանատու պաշտօնեայի փափուկ դիրք։ Նոքա թաղնուած անյայտութեան վահանի տակ, պահանջում են, որ ուրիշներն իրենց ճակատով պատը ճղեն և անցնեն կամ իրենց սարքած բոլոր յիմարութիւնների հետ կապուած ճնշումներն ու հալածանքները մէջ տեղից վերացուն։ Սրբազան Օրմանեանը յեղափոխական տարրերի համար ցանկալի անձնաւորութիւնը չէր, իսկ կաթողիկոսական թեկնածու նկատուելուց յետոյ՝ ամէն տեսակ ստոր միջոցներ գործ էին դնում նրան վարկաբեկ անելու։ Այս մի մեթոդ է գործունէութեան, որի մէջ վարժուած են մեր խուժանապետները, երկու տարի առաջ էր, որ անլսելի անարգանքի և անպատուութեան ենթարկեցին մի ուրիշ բարձրաստիճան հոգեւորականի, Տ. Սուբիաս արքեպիսկոպոսին, որ ոչ մի յանցանք չունէր ենթադրեալ մեղադրանքների մէջ։ Թէև ստութեան հաստ գիմակը դէմքերին դրած դաշնակցական լրագրապետները պաշտպանում էին այդ արարմունքը։ Աւելացնենք և այն, որ յեղափոխանների մի ուրիշ խումբ

«երիտասարդ Հայաստան» թ. 39. «Յո երթաս Պատրիարք» վերնագրով յօդուածի մէջ նրան մահ էր սպառնում կաթողիկոս ընտրուելու դէպքում: Մենք խորապէս համոզուած ենք, որ Սրբազան Օրմանեանին հասած անարգանքի գլխաւոր շարժառիթը նրա կաթողիկոսական թեկնածու լինելու հանգամանքն է: Անշուշտ դեր են կատարել և նրա արժանիքներից զուրկ անձնական թշնամիներն և նախանձորդները, որոնք քննադատ են հանդիսացել նրան տարիների ընթացքում: Մենք չենք ուրանում, որ Ս. Օրմանեան սուէր և պակասութիւններ, բայց շատ չնչին նորա առաւելութիւնների համեմատութեամբ:

Յուլիսի 16-ին Ս. Պատրիարքը դուժարել էր տուել խառը ժողովը սահմանադրութեան առթիւ «գոհարանական մաղթանք» կատարելու և առհասարակ պաշտօնական մասնակցութեան համար սրոշում անելու: Այդ մի և նոյն ժողովում նա իւր հրաժարականն է տալիս, ինչպէս սովորական է այդպիսի դէպքերում, դուցէ և նոր հոսանքի բռնած դիրքը նկատելով: Բայց նորա հրաժարականը բաւական չէր. պէտք էր անպատուել նրան և ցոյց տալ աշխարհին մի և նոյն ժամանակ, որ մենք վեհանձնութիւնից զուրկ և ստրկութեան շղթաների մէջ սնուած և տրորուած տականքների յատկութիւններով բաւական օժտուած ենք: Եւ ահա «Մանղումէ Էփրեսար» թերթի երկու աշխատակիցներ խուժանի գլուխ անցած, «յանուն ազգի» պահանջում են խառը ժողովից պաշտօնանկ անել պատրիարքին: Ամէն տեղ նոյն են խուժանապետները, իրենք և իրենց հրամաններին հլու խուժանը ամբողջ ազգն են կազմում և իրաւունք ունին ազգի անունով խօսելու: Ի զուր խառը ժողովի ատենապետ Պարրիէլ էֆ. նորատունկեան աշխատում է համոզել, որ խառը ժողովը Պատրիարք հրաժարեցնելու իրաւունք չունի, այլ միայն երեսփոխանական ժողովը, և թէ Պատրիարքը ինքը հրաժարական է տուել:

Պատրիարքի հրաժարուելուց և իւր բնակարանը բաշտուելուց յետոյ պրոպագանդան նրա դէմ աւելի է զօ-

րանում. Ժողովրդի մէջ լուր են տարածում, որ նա 30,000
 ոսկի է իւրացրել ազգային սնդուկից և կամենում է փախ-
 չել Ռուսաստան, թէ Իզմիրլեան Սրբազանը հեռագրել
 է Երուսաղեմից. «ինչո՞ւ հաշիւ չէք ուզում Օրմանեան
 պատրիարքից, սպասում էք որ քաղաքից փախչի և յետոյ
 պահանջէք»։ Այս մտքով յայտարարութիւններ են տպել
 և ցրուել Ժողովրդի մէջ։ Մենք համոզուած ենք, որ
 այդ հեռագիրը մի կեղծիք է եղել ամբոխին գրգռելու
 համար. իսկ եթէ կեղծիք չլինի այդ, մեզ համար ամենախորի
 վիշտը և հիասթափութիւնը կլինի Իզմիրլեանի անձնաւո-
 րութեան նկատմամբ։ Հրատարակել են նաև, որ Ս. Օր-
 մանեան Սահմանադրութեան դէմ է, որովհետև թեթեա-
 ւութեամբ անմիջապէս չէր սկսել հանդէսներ կազմել,
 ճառեր արտասանել, այլ աւելի շրջահայեաց՝ սպասել էր
 «Խաթիթը հիւժայուն»-ի հրատարակութեան և կամեցել էր
 իմանալ յունաց պատրիարքարանը ինչ դիրք է բռնում
 կամ Հայոց Ժողովրդի ներկայացուցիչ Խառը Ժողովը ինչ
 որոշում կանխ։

Սակայն պ. Սարուխանի թղթակցութիւնները Պօլսից
 (Մշակ 199, 170) պարզում են, որ Ս. Օրմանեանը չի հրա-
 Ժարուում ամենեւին հաշիւ տալ ազգային օրինաւոր իշխա-
 նութեան, իսկ ներքև հրատարակած Բիւզանդիոնի յայտնի
 խմբագիր Բիւզանդ Քէչեանի յօդուածը կասկած չի թող-
 նում, որ նորա հաշուական տուժարները մաքուր են և
 կանոնաւոր և թէ խղճից զուրկ մարդկանց դործ է ոչինչ
 չստուգուած, այդպիսի բարձրատիճան հոգեւորականի պա-
 տիւր ռոնտաակ տալ և գրգռել ամբոխին նրա դէմ։ Պ.
 Քէչեանի յօդուածից մի խնդիր ևս պարզում է, որ
 «Մանգումէի Էֆքեարի» մարդկանցից զատ, որոնք մօտ են
 յեղափոխական կոչուած տարրին, կարեւոր դեր են կա-
 տարել Ս. Օրմանեանի հրաժարականի և վարկաբեկ անե-
 լու մէջ նաև Երիցեան Գէորգ սրբազանի և Ղևոնդ վար-
 դապետի կողմնակիցները։ Վերջին հոգեւորականները մե-

դադրում են դրամական անհաւատարմութեանց և զեղծմանց մէջ երուսաղեմի վանքին վերաբերեալ, որոնց համար քննութիւն էր նշանակել Խառը ժողովի որոշմամբ Ս. Օրմանեանը:

Ինչ և իցէ. հակառակորդները հասել էին իրենց նպատակին ի հարկէ առանց խտրութիւն դնելու միջոցների մէջ: Պատրիարքը հրաժարուած էր և ամբօրը կոյր թշնամութեամբ լցուած: Պէտք էր վերջին գործողութիւնը կատարել: Եւ ահա «Թուլութեալիներէ» կազմուած ամբօրը շրջապատում է նախկին պատրիարքի բնակարանը և խուժանական ցոյցեր տարքում նրա դէմ: Ականատես Սարուխանի խօսքերով մեր ընթերցողներին մի դազափար տանք այդ ստոր և անվայել վարմունքի մասին. «Օրմանեանի տան շուրջը և մերձակայ փողոցները բռնված էին ահաբեկի ըզմութեամբ. դրան առջև մի փակ կառք էր սպասում: Ամբօսից զայրոյթի ձայներ էին լսվում նախկին պատրիարքի հասցէին: Մի քանի րոպէ յետոյ Օրմանեան սրբազան՝ թիւրք ոստիկանապետի ընկերակցութեամբ դուրս է գալիս տանից և մտնում կառք: Նրա հետ նստում են ոստիկանապետն և իր օգնականը: Ամէն կողմից թափվում են կառքի վրա հասարակ դասակարգին պատկանող զանազան մարդիկ, մէկը բարձրանում է կառքի վրա, միւսը ետևը, երրորդը մի պատուհանից է կառչում, չորրորդը միւս պատուհանից և բռունցքները ուղղում պատուհաններից ներս դէպի նրան, որ դեռ երէկ Թուրքիայի Հայոց ամենազօր պատրիարքն էր, բայց բռունցքները հասնում են ոստիկանապետի և իր օգնականի թևերին և ոչ իրանց բուն նպատակին: . . . Եւ այսպէս կառքն անցնում է Պէրան և Ղալաթեան և պատրիարքարան հասնում: Ամբօսի նպատակն էր փակել այնտեղ, որ չփախչի: «Միւս հասարակութիւնները վրդովված էին այս անվայել չափազանցութիւններից, մի յոյն բարեկամ սաստիկ զարմոնք էր յայտնում ինձ հայերի այս ագեղ վարմունքի մասին: Մի լուրջ յոյն թերթ՝ «Կոստանդինուպոլիս» ընդհանուրի զգացմունքի թարգման է

հանդիսանում, հայ ժողովրդի ուշադրութիւնը հրաւիրելով այս անտակտ վերաբերմունքի վրա: Սրա վրան աւելադրեցինք և «Մեր Ձայնը» № 92-ի հաղորդած տեղեկութիւնը, որ քաղել է Ռուսաց թերթերից. «Պատրիարքը առարկայ եղաւ ամեն տեսակ անարգանքի ու վիրաւորանքի. ամբոխը նրան երեսնիվեր թքոտում էր և «մահ նրան» կանչվըռտում: Պատրիարքն ուշագնաց եղաւ, ու բերանից արիւն գնաց»:

Սակայն այնքան մեղադրելի չէ խուժանը, որ վատ գործիք է դարձել խղճից և ամօթից դուրկ պետերի ձեռքին, այլ ժողովրդին առաջնորդելու կոչուած հայ թերթերը: «Մանղումէ էփքեար» և «Արևելք», առաջինը որոշ հաշիւներով և երկրորդը ժողովրդին դուր գալու համար իրենց էջերը լայն բաց են արել Ս. Օրմանեանցի հասցէին ուղղած անորակելի հայհոյանքներով: Բարեմիտ ընթերցողը միայն սրտի խորքից դայրանալ կարող է այդ թերթերի մէջ փայլող «ցածութեան» համար: Բաւական է միայն «Մանղումէ էփքեարից» մի նմուշ բերել այդ ցածութիւնը բնորոշելու համար. կարդացէք թ. 2177 «Օրմանեան կուզէ իր նախկին փարախը վերադառնալ» վերնագրով լուրը. «Զրոյց կը շրջի, թէ Օրմանեան նախկին և ապագայ դերասպանը փափաք յայտներ է կրկին կաթօլիկներուն վերադառնալու»: Կարո՞ղ էք զսպել ձեզ և արդար զայրուածով չկոչել. «ամօթ, ամօթ»: Իսկ «Արևելքը», որ համարուել է Սրբազան Օրմանեանի հովանաւորութիւնը վայելող մի թերթ, որի էջերը լցուած են եղել նորա կրօնական բովանդակութեամբ յօդուածներով, հոսանքին համակերպուելու և կաշին պահելու համար չի կարծրումնոյն անվայել վարմունքը ցոյց տալ և հայհոյական խօսքեր ուղղել նրա հասցէին: Մեր մէջ ևս լրագիրներ կան, որոնք դիտաւորեալ ստախօսութիւնից, վարկաբեկ անելուց (տես «Արարատ»-ի 1907. Գեկտ. «Մտութեան և կեղծիքի ճանապարհով» յօդուածի մէջ յիշուած դաշնակցական թերթերը) կամ հոսանքին համակերպուելուց չեն քաշոււմ, բայց տարբերութիւնը շատ մեծ է մերոնց և նրանց մէջ: Որքան աշ-

խատանք է հարկաւոր ստրկութեան մէջ բթացած բարոյական զգացումը բարձրացնելու:

Թէ հակաօրմանեանական այս շարժումը ազատ չէ նաև սրիկայութեան հետ խառնուած երեսխայական թեթեամտութիւնից, կարող է հետևեալը պարզել: «Արևելք» թ. 5855 կարդում ենք, «Եռաձայնին դէմ ցոյց», Կիրակի օր. Ղալաթիոյ եկեղեցիին մէջ արտասովոր դէպք մը պատահեցաւ պատարագի միջոցին: Երբ «Խորհուրդ խորին»-ը պիտի սկսուէր, երկու երիտասարդներ եկեղեցիին պահարանը երթալով երաժշտապետ Չիլինկարեան էֆէնտին փնտռեցին: Չիլինկարեան էֆենդին դուրս եկաւ. յիշեալ երկու անձերը՝ խարաղանը ձեռքերնին սպառնացան, ըսելով. «Պէտք չէ եռաձայն ըլլայ. Օրմանեանին սխաղմն է ատ, ապա թէ ոչ տակն ու վրայ կընենք հոս»: Սակայն ժողովուրդը խոյանալով այս երկու սրիկաներուն վրայ, լաւ մը տփեց և Խորհրդարան տարաւ, ուր միջադէպը փակուեցաւ:»

Այս համառօտ նկատողութիւններին կցում ենք Բիւզանդիոնի խմբագիր պ. Բիւզանդ Քէչեանի յօդուածը, որ շատ հարցեր պարզում է, գործերին լաւ տեղեակ լինելով:

«Ազատութեան բուռն հոսանքն առաւ տարաւ Օրմանեանը: Օր չանցնիր որ հին Ռէթիմի խոշոր ներկայացուցչի մը անկումը չտեսնենք: Յիշաւի պատմական չրջանի մը մէջ կապրինք, ինչպէս էր 1789 Փրանսայի համար, և 1848 թուոր Եւրոպայի համար: Օրմանեան որ իր դաստիարակութեամբ քաջ գիտէր այս պատմական անցքերը, իր իտայական կրթութենէն սպասուած ձկունութիւնն ու ճարպիկութիւնը չցուցուց փոփոխուած պարագաներուն առջև: Ինք որ ամէն առթիւ կստեղծէր, կրաղմասպատկէր քարողներն ու հոգևոր արարողութիւններն և սիրայօժար կմատուցանէր գոհաբանական պաշտօնները, Ազատութեան աւետիսն առնելուն պէս չհասաւ կացութեան բարձրութեանը, չկրցաւ շարժումին գլուխ անցնիլ, և նոյնանալ անոր հետ, այս անգամ սրտանց գոհանալու համար Աստուծոյ որ Ն. Կ. Վեհափառութեան ձեռամբ Ազատութիւն կշնորհէր այս առապելալ երկրին և մեր հարստահարեալ ազգին: Կարծես մտաւոր անգամալուծութեան մատնուեցաւ, և չկրցաւ Մայր-Եկեղեցւոյ բեմէն հռչակել Ազատութեան

բարիքները, չկրցաւ ծանուցանել իր Պատրիարքական Համարատուութեան և իր մատակարարած գրամներուն հաշիւներուն պատրաստ ըլլալը, և վաղն իսկ Ազգային Ընդհանուր Ժողովն ի նիստ հրաւիրած ըլլալը չկրցաւ յայտարարել: Ապշած, կարկամած մնաց: Երէկի թերթերուն մէջ ծանոյց թէ զոհաբանութիւն պիտի մատուցուի վաղը (այսօր): Բայց կոչէք չարագուշակ բառն որ կհնչէ մեծ Յեղաշրջումներուն ժամանակ Trop tard! Եւ ուշ է: Այնչէս չէ:

Բայց իր այս սխալը վերջին կաթիլը միայն եղաւ որով կը զեղու արգէն լեցուն բաժակը: Օրմանեան զոհն է իր իսկ սխալներուն և ուրիշներուն ալ գործած սխալներուն, զորոնք իրեն քաւել կուտան հիմա: Օրմանեան նաև զոհն է այնպիսի հանգամանքներու, որք իր կարողութենէն վեր էին: Օրինակի համար, Ազգ. Վարչութիւնն որոշեց Երուսաղէմի Վանքին հաշիւները նայիլ, և Պոլիս բերել տուաւ Ղևոնդ վրդ.-ը: Արդ, Ղևոնդ վրդ.-ին և Գէորգ եպիսկոպոսին բոլոր համակիրներն ipso facto հակապատրիարքեան եղան, և իրենց զգացումները լիովին ցուցադրելու պատեն առիթ գտան, և թէպէտ Օրմանեան Պատրիարք օրէնքի և իրաւունքի հակառակ բան մը չըրաւ Ղևոնդ վրդ.-էն հաշիւ պահանջելով, բայց կերպիւ իւրք Երուսաղէմի խնդրոյն զոհն է:

Օրմանեան Պատրիարք կքաւէ նաև ուրիշներու մեղքերը, օրինակի համար իր ազգականներուն, պարագաներուն և իր շուրջն յածողներուն մեղքերը, որք իր անունով զեղծան, իր անունին հովանիին տակ «գործեր եփեցին», — երեսի վրայ թողլով Ազգին գործերն և Պատրիարքարանի միջնորդութեան կարօտ խեղճ կեղեքեալ ընտանիքներու գործերը: Օրինակի համար կարելի չէ հաշուել թէ Պատրիարքարանի նախորդ Ա. գործակաւարն և Բերայի Թադ. Խորհրդին նախորդ Ատենապետը, մտերիմ խորհրդականք Օրմանեան Արքադանին, որքան վնաս պատճառեցին իր համարւին: Երեւակայեցէք որ Օրմանեան Պատրիարք ինք յանուն Ազգին աշխատեցաւ Պալայի աստիճան բարձրացնելու Ռուպէն Էֆ.-ն, Ոստիկանութեան նախկին թարգման մը, Աշարի նախկին մէմուր մը, որ ոչ իսկ հայերէն չիտէր, որ ազգային կեանք չունէր, բայց նոյն իսկ Քաղաքական Ժողովոյ Ատենապետէն աւելի բարձր դիրք բռնած էր Օրմանեանի քով, ահաբեկելով չորս կողմ: Յետոյ Օրմանեան Այնթապի հանք մը երեսն հանեց, Սիսակ Քէրիտ և Ընկերութեան հետ նոր մտերմութիւններ յօրինելով, որք Ռուպէնեաններէն աւելի չէին արժէք:

Օրմանեան Արքադան նաև կքաւէ այնպիսի պարագաներ, որք իր ձեռնհասութենէն վեր էին: Օրինակի համար, Ոստիկանութեան նախարար Շէֆիզ և Հէյնէթի Թաղըզէի նախագահ

Մէհմէտ Ալի, երկու տխրահոգակի Հայակերները թշնամի էին Օրմանեանին, այնպէս որ Ոստիկանութեան Դուռը դորձ մը յաջողցնելու համար, աւելի աղէկ էր բնաւ չգիմել Պատրիարքարանի Պատրիարքը զանոնք կամբաստանէր իբր զօշաքաղ, անոնք ալ Պատրիարքը կամբաստանէին իբր երկերես, հաւատարիմ՝ Տէրութեան առջև, բայց նաև համախոհ՝ Եւրօպայի քօմիդէներուն։ Այս հակառակութենէն Ազգը կտուժէր, Պատրիարքին դէմ՝ զանգատելով իբր անզօր կամ անտարբեր։

Նմանապէս հազիւ թէ Օրմանեան կյաջողէր յարաբերութիւնները քիչ շատ բարւոյքել Դրան հետ, և զիջումներ ձեռք բերել, և ահա Եւրօպայի Հայ քօմիդէներուն մէկ նոր ծայրայեղութիւնը կուգար տակնուվրայ ընել կացութիւնը, և Ազգին դորձերը դարձնալ դժուարութեան կմասնութիւն կառավարական անվստահութեան երևոյն։ Պատրիարքութեան ուրիշ միջոց չէր մնար, բայց եթէ հրաժարիլ, և թէպէտ հրաժարելու ցոյցեր կընէր, բայց զրգբախտաբար ոչ իսկ Կառավարութիւնը կհաւտար այն ցոյցերուն անկեղծութեան։ Օրմանեան պամուսձ էր իր Աթոսին, ինչ որ ալ ըլլար Ազգին վիճակը։ Իր սովորական կեանքն ու է վիւրիւթում չէր կրեր — Նոյն պատարագները, քարոզները, հանդէսները, պատոյաները, կապուորումները, մինչ Ազգին տխուր վիճակին և իր աննպաստ դիրքին աւելի պիտի վայէր համեստ զգուշաւորութիւն և կոկիկ ձեռնպահութիւն մը, իբր նշան կարեկցութեան համատարած խեղճութեան համար։

Իզմիրլեանը կքննադատէին թէ բնաւ չէր երևնար ժողովրդին, ոչ մէկ արարողութեան կգտնուէր, և սուղի տուն դարձուցած էր Պատրիարքարանը։ Օրմանեան ճիշդ հակառակ ծայրայեղութեան մէջ էր, իբր թէ բան մը պատահած չըլլար Ազգին։ Օրմանեան Ազգին վիճակը չհասկցողի, այն վիճակին չկարեկցողի ձև մը ունէր, կըսեն, բայց արդար ըլլալու համար, պէտք չէ մօռնանք, որ տառապեալ գաւառներուն նպաստ հասցնելու համար հաստատուած Սնտուկն իր օրով անօրինակ կերպով արդիւնաւորուեցաւ, և միջոցներ ու բարեբարներ ճարելու համար ինք ամէն կողմ գիմեց, և նախորդ Խաֆիէական Ռեփրմին օրով իր մէն մի քայլափոխին դէմ յարուցած աներեակայելի դժուարութեանց չնայելով, քիչ շատ ամէն կողմ օգնութիւն փութացնելու ջանադիր եղաւ։ Երեակայեցէք որ Անտօն Քէօչէ օղլուի Խէք լրաններ միշտ կամբաստանէին զինք Կառավարութեան առջև թէ Դրամ կհաւաքէ Քօմիդէներուն հասցնելու համար, և Պատրիարքն ամէն անգամ կաղաչէր մեզ, որ նպաստները թէպէտ ծանուցանենք ի միամտութիւն առաքողներուն, բայց համագումարը չյիշենք, որ պէս զի խոշոր գումար մը չերկի Խաֆիէներուն։ Ըսին թէ Օր-

մանեան դրամ հաւաքեց և հաշիւ չտուաւ Ազգին: Ընդհակառակն, հաշիւներն յոյժ կանոնաւոր տուժարներու մէջ արձանագրած է, Ազգին ամէնէն պատուաւոր սեղանաւորներէն ու վաճառականներէն կազմուած նպաստից Մատուկին կնամակալութեան աշխին առջի, ու Վարչութեան անդամներէն և Թուրքիոյ և Ռուսիոյ պատուաւոր ազգայիններէն ու խմբագիրներէն ու՛ր որ երբ և ուզեց, տեսաւ տղամարները: Եւ ներկայ էի երբ Մարսիլիայէն եկած հայր և որդի Պարոնայք Միրզաեանի ցոյց տուաւ յիշեալ տուժարները, և Միրզաեան որդի, քաջ հաշուակալ, վիպեց անոնց մանրակրկիտ կանոնաւորութեան: Իրաւ է որ Օրմանեան նեպոդիզմ ունեցաւ (տոհմաշահութիւն), բայց բնաւ չեմ հաւտար, որ Ազգին մէկ դրամը խորեց, զողջաւ, յանիրաւի իւրացուց: Արգարե ինք հարուստ է այսօր, որովհետեւ իր 12 տարուան պաշտօնը խեղացի և հաշուադէտ կերպով շահագործեց:—50 լիրա ամսական, 20 լիրա կառքի ծախք, տարեկան որոշեալ պարգև Արքայական, զոր ամէն կրօնապետ կընդունի, 5էն 10 լիրա ժամուց մէն մի պատարագի, 10էն մինչև 30 լիրա մէն մի հարուստ հարսանիքէ ու ննջեցեալէ, ամբան ձրի ամարանոց այս ու այն կողմ, շնորհիւ իր բարեկամական յարաբերութեան հարուստ դասակարգին մէջ, որ կյարգէր և միշտ կհրաւիրէր զինք, և դրամը չէր զլանար իրեն: Հարկ է նաև խոստովանիլ թէ Օրմանեան վերին աստիճանի ընկերային մարդ էր, իր խօսակցութիւնն յոյժ հաճելի էր, կատարեալ կենցաղագէտ մէր, ընտանեկան անթերի և անստգիւտ կեանք մ'ունէր, և իր անձնական բարոյականն անաղարտ մնաց, Բերայի ամէնէն եռուղեւ կեդրոնին մէջ բնակելուն հակառակ: Շնորհիւ իր կոկիկ կեանքին, իր գործը զիտցող այսպիսի անձի մը դրամ զիզելը բնական էր: Բայց որովհետեւ Ազգը վերջին ծայր խեղճութեան մէջ էր դուրսերը, իր Պատրիարքին ատղին դրամ զիզելն հարկաւ աշխի կը զարնէր ու նախանձ կշարժէր, մինչ տարբեր հանգամանքներու մէջ, պիտի վերընծայուէր իր սակաւապետ ու տնտեսագէտ սովորութեանց:

Օրմանեանի մէկ գլխաւոր պակասութիւնն այն եղաւ, որ չափէն աւելի կհաւատար նախորդ Ռէժիմին տեսականութեան, բընաւ մտքէն չէր անցնեն թէ օր մը իրերը տարբեր երևոյթ կրօնային առնել, ուստի կեդրոնացման դրութեան կղիմէր շարունակ, և առժամաբար դադարման ենթարկուած Սահմանադրութեան ինքն ալ անհարկի հարուած մը տալով, բոլորովին բարձի թողի կընէր զայն: Ամէն բան ինք էր, և ինչպէս որ Լուի Ժ. Բ. քսաւ L'Etat, c'est moi, (Եւ ինքս եմ Տէրութիւնը), Օրմանեան ալ աւելի իրաւամբ կրնար յայտարարել թէ «Եւ ինչս եմ Պարլեմէնտ, Պարլեմէնտան, Կրօնական Ժողով, Բաղաւաճական Ժողով, Տնտես. Խոր-

հոգիք, եւ լսողք չորս քան ինչն, Դատարանական Խորհուրդ, և Ոստանական Խորհուրդ, Բայց այսքան տարբեր պաշտօններ իր վրայ բեռնաւորելն երբեմն ծիծաղելի սխալներու առիթ կուտար Միւս կողմէ, հարկ է գնահատել իր անօրինակ գործունէութիւնը, իր մէթոտիկ և ամենաբաւ աշխատասիրութիւնը, որով կհասնէր ամէն գործի, և իր պատրաստած հաշիւներն ու տեղեկագիրներն ընդհանրապէս կգնահատուէին իր ժողովականներէն, որոնց մեծ մասը կոյր վատահութիւն ունէր իրեն վրայ, Հանգուցեալ Տոբդ. Ստեփան վաչա, ըստ ինձ թէ Օրմանեան տան Եպիսկոպոսի կարողութիւն ունէր, և ինքնին կհաւասարէր բովանդակ Վարչութեան: Բայց իմացական և ֆիզիքական այս նշանաւոր կարողութիւնն իսկ խաբեց զինք. և վերջին ժամանակները մանաւանդ, հակասահանագրական, ինքնիշխան, անձնիշխան Պատրիարքի մը ձեռն ու ընթացքը տուաւ իր զրեթէ բոլոր արարքներուն:

Բայց երբ հրաժեշտ կուտանք Օրմանեան Սրբազանին, զինք անգուռն բերնով նախատողներուն միայն մօրիկ չընենք, և չմոռանանք իր ծառայութիւնները:—Երեսուն տարիէ ի վեր որ թողած էր Հոռմայ Եկեղեցին և բարեյիշատակ Տ. Ներսէս Ս. Պատրիարքին օրով Ազգ. Եկեղեցւոյ ծոցը մտած էր, բնաւ ոչ մէկ պաշտօնէ խուսափեցաւ, ու գնաց ուր որ կոչեց զինք Ազգ. Տ. Ներսէս Ս. Պատրիարք Կարնոյ Առաջնորդ կարգեց զինք, Տ. Մակար Ս. Կաթողիկոս Գէորգեան Ճեմարանի Աստուածաբանութեան ուսուցիչ անուանեց զինք, կաթողիկոսութենէ դարձած վարդապետը, որ հոն աւելի կմնար, եթէ Ռուս Կառավարութիւնը խնդիր հանած չըլլար օտարահպատակ եկեղեցականի մը Ս. Էջմիածնի մէջ յարատե ներկայութեանն համար: Խորէն Պատրիարք զինք կոչեց Դպրեվանքը վերակազմելու, և Օրմանեան եռանդեամբ փարեցաւ այս գործին, և պատուարեր կերպով կատարեց, Տ. Եղիշէ Սրբազանի գնահատելի գործակցութեամբ, Ազգին պարգեւելով վարդապետներ, որք իրենց վարպետին պէս յօժարակամ գացին, ուր որ ի պաշտօն հրաւիրուեցան այն տառապեալ չրջաններուն մէջ, 1896էն ասզին: Իր 12 տարի անընդհատ Պատրիարքութիւն վարելն ինքնին արժանիք մը չէր հարկու, քանի որ քմահաճ և անպատասխանատու վարչութիւն մ'էր այն: Երեսօթիսանական Ժողով չկար որ հարցում, հարցապնդում ուղղէր իրեն, և կանոնաւորապէս նորոգուող վարչութիւն չկար, որ իրական + շէքը: Ի գործ դնէր իրեն վրայ, և ազատ Մամուլ ալ չկար, որ գիմումներ ընէր: Ընդհակառակն, ամէն բերան դոյ էր, և բերան բացողներուն զըլխուն զարնելն ալ չատ դիւրին էր,—չորհուր զգուելի Տպագրական Տեսչութեան մը, որ Դամոկլէսի սուրն էր մեր գլխուն վրայ, մէկ բառի, նոյն իսկ մէկ տառի համար զմեզ կործանելու պատրաստ:

Չմոռնանք նաև իր գրական անընդհատ դործունեութիւնը, որով միշտ կձօխադնէր եկեղեցական գրականութիւնը, և իր բնական գիւրթաստութիւնը, որով կ'ապշէր իր քարոզները, միշտ մեծ բազմութիւն մը քաշելով իր նախագահած հոգևոր արարողութիւններուն: Չմոռնանք նաև տարօրինակ կերպով խիստ Ռէժիմն որոյ որով պաշտօնավարեց, և որով պիտի բացատրուէին, պիտի լուծաբանուէին իրեն վերագրուած շատ մը թերութիւնք: Արդարև, կը յաւինք որ այնքան օժտեալ, այնքան կարող, այնքան խոստովալից եկեղեցականի մը պաշտօնական կեանքն այսպիսի նսեմ վախճան մը կուենայ: Բայց կյուսանք և կմաղթենք, որ հանրային կարծիքն աւելի արգարութեամբ զատէ Օրմանեանն, երբ իր հաշիւները մատուցանէ Ազգային ժողովին, և իր 12 տարուան լիակատար համարատուութիւնն ընէ Ազգին ընտրեալ ներկայացուցիչներուն առջև Մինչև որ այն հաշիւները հայտնին, զինք այժմէն իրր զերծանող ամրաստանելը միմիայն Ղեւոնդ վարդապետի կուսակիցներուն վրէժխնդրական մէկ գործը կրնայ համարուիլ, որմէ պէտք չէ որ խաբուինք»:

«Բիւզանդիան».

Յարգելի խմբագրութեան «Արարտ» ամսագրի

Մայր Աթոռի Վանական Կառավարութիւնը պատիւ ունի խնդրելու յարգէ՛ք խմբագրութեանդ հրատարակել «Արարտ» մերձակայ համարում հետևեալը:

Եղիշէ քահանայ, Շարուրի Խանութխա գիւղից Վարդանեան Թարվերանեանց ապահովագրուած լինելով «Նիւ-Խորհ» ընկերութեան մէջ, ի թիւս իր ազգականներին, ժառանգ էր համարել նա և Մ. Աթոռին հինգ հարիւր ռուբլի գումարով: Թարվերանեանը վախճանուել է անցեալ 1907 թ. գեղտեմբերին և յիշեալ ընկերութեան 21 անցեալ Մայիսի գրութեան համաձայն Վանական Կառավարութիւնն ստացաւ այդ գումարը:

Հանգուցեալ Թարվերանեան քահանան, հարկաւ նախանձախնդիր է եղել Էջմիածնի շահերին և անշահասիրաբար այդ եղանակով է կամեցել իր լուծման ձգել Մ. Աթոռի ազքատիկ զանձարանը և այդ իսկ հանդամանքը համարելով առաւել Աստուածահաճոյ, Մայր Աթոռի միաբանութիւնը, Ամենապատիւ Տ. Տեղակալի հաճութեամբ, ամսոյ 13-ին Ա. պատարագից յետոյ, հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեց Մ. Տաճարում յանդարդութիւն հողոյ հանգուցեալ Թարվերանեան քահանայի:

Ընդ սմին Կառավարութիւնն իր ցաւակցութիւնն է յայտնում հանգուցեալի ազգականներին:

Նախագահ Կառավարութեան Ղեւոնդ Նպխիոպոս.

Քաւսուղար Լ. Ապանեանց

